COVID - 19

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նշենք, որ անորոշ ժամանակով սահմանված սույն արգելքը չի տարածվում միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող ընկերությունների վրա: Տեղաշարժի իրավունք վերապահվում է նաեւ ռազմավարական նշանակության ու բժշկական կառույցների աշխատակիցներին, լրատվամիջոցների ներկայացուցիչներին, առաքման ծառայությունների համար եւս բացառություններ են արվել:

Որոշման մեջ նաեւ նշված է, որ բոլոր կազմակերպությունները կաշխատեն մինչեւ ժամը 22:00-, բացառությամբ դեղատների եւ ռազմավարական նշանակության օբյեկտների:

Բացի այդ, Թբիլիսիում, Քութայիսիում, Բաթումիում, Ռուսթավիում, Զուգդիդիում, Գորիում եւ Փոթիում ժամանակավորապես կփակվեն ինչպես մունիցիպալ, այնպես էլ՝ մասնավոր մանկապարտեզները:

Սահմանափակումներով է գործելու նաեւ հանրային տրանսպորտը: Մասնավորապես, ավտոբուսում ու երթուղայինում կանգնած ուղեւորներ չեն լինելու, մետրոյում ուղեւորահոսքի վերահսկման որոշում է կայացվել:

Նշենք, որ տեղաշարժ արգելք խախտելու դեպքում ֆիզիկական անձանց համար սահմանված է 2000 լարի, իսկ իրավաբանական անձանց համար՝ 10 հազար լարիի տուգանք:

Ավելացնենք, որ միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ՝ որոշ սահմանափակումներ սկսեցին գործել դեռեւս նոյեմբերի 4-ին: Մասնավորապես, բաց եւ փակ տարածքներում դիմակ կրելը դարձավ պարտավիր, խոշոր քաղաքներում ուսումնական գործընթացը տարվում է հեռավար, ռեստորաններին թույլատրվում է աշխատել միայն մինչեւ երեկոյան ժամը 22:00-ն:

«ՎԱՐԱԿԻ ՈՐԵՎԷ ԱԽՏԱՆԻՇԻ ԴԵՊՔՈՒՄ, ՉՓՈՐՁԵՔ ԲՈՒԺՎԵԼ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ԿԱՄ ՃԱՆՈԹ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՎ»

Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցի տնօրեն Թենգիզ Ցերցվածեի հայտարարությամբ, նույնիսկ հիմա, երբ ավելացել է կորոնավիրուսից մահվան դեպքերի թիվը, բնակչության մեծ մասը չի հավատում այս վարակի գոյությանը:

- Անգամ հիմա, երբ այդքան շատ դեպքեր կան, եւ մահացությունների թիվն ավելացել է, բնակչության զգալի հատված չի հավատում, որ համավարակ գոյություն ունի, նրանք կարծում են, որ այն ինչ-որ մեկը հորինել է կամ որեւէ նպատակով շահարկում: Զգուշացնում եմ ձեզ, սա մահացու վարակ է: Ես դիմում եմ հիվանդներին, բնակչությանը ցանկացած մարդ, ով կունենա շնչառական վարակի որեւէ ախտանիշ, չդիմի ինքնաբուժման, հարեւանների կամ ծանոթ բժիշկների խորհրդով բուժմանը, այլ անհապաղ դիմի բժշկական կառույցերին: Եթե չեն կարող կապվել ընտանեկան բժշկի 112-ի հետ, կան այլընտրանքային համարներ, ստեղծվել է հատուկ կայք, որտեղ գրված են այլ համարներ, ինչպես կապվել շտապօգնության բրիգադների, առցանց բժիշկների կամ կամավոր բժիշկների հետ,- հայտարարել է Թենգիզ Ցերցվածեն:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՎԱՐԱԿՄԱՆ ԿԱՍԿԱԾԻ ԴԵՊՔՈՒՄ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐՈՎ

Անհետաձգելի օգնության կենտրոն՝ 112
Վրաստանի առողջապահության նախարարություն՝ 15 05
Վրաստանի կառավարության միասնական «Թեժ գիծ»՝ 144
Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոն՝ 116 001
Երեխաների օգնության «Թեժ գիծ»՝ 111
Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոց՝ + 995 595 39 55 66
Շտապ օգնության կենտրոն՝ +995 322 54 70 99
Վրաստանի արտաքի գործերի նախարարության «Թեժ գիծ»՝ +995 322 94 50 50, +995 595 88 38 12
Վրաստանի սահմանը հատելու հետ կապված հարցերի համար՝ +995 322 26 11 12
Շվեյցարիայի դեսպանությանն առընթեր Ռուսաստանի շահերի բաժին՝ +995 322 91 26 75
«Վերին Լարս» վերասկման անցակետ՝ + 7867 2252753, 7867 2595227
Վրաստանում Հայաստանի դեսպանատուն՝ +995 322 95 17 23
Թբիլիսիի օդանավակայան՝ +995 322 31 04 21
Քութայիսիի օդանավակայան՝ +995 431 23 70 00
Բաթումիի օդանավակայան՝ +995 422 23 51 00

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎՆ ՕՐԵՑՕՐ ԱՃՈՒՄ Է

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 45,425 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 1 187 549 հազարը: Ապաքինվել է 33 միլիոն 034 163 մարդ:

Վիրուսով վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում է ԱՄՆ-ը, որտեղ կա հաստատված 10,745,532 դեպք: Այստեղ մահացածների թիվը 244 364 է: Երկրորդ տեղում Հնդկաստանն է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է 8, 773, 479-ի, մահացածներինը՝ 129 188-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում Բրազիլիան է, որտեղ վարակվել է 5 810, 652, մահացել՝ 164,737 մարդ: Ռուսաստանում կորոնավիրուսով վարակվել է 1,887,836, վարակի հետեւանքով մահացել՝ 32,536 մարդ:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է 115,855-ի, մահացածներինը՝ 1 738-ի, ապաքինվածներինը՝ 74 105-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է 7,4293 մարդ: Վարակից մահացել է 946, ապաքինվել՝ 42 516 մարդ:

Վերջին տվյալներով, Վրաստանում վարակվել է 6,658, մահացել՝669, ապաքինվել՝ 58674 մարդ:

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՉԵՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ

Վրաստանում առկա համաճարակային իրավիճակը եւ սահմանված կետային սահմանափակումները քննարկվել են միջգերա-

տեսչական համակարգող խորհրդի նիստում, որն անցկացվել է վարչապետ Գիորգի Գախարիայի գլխավորությամբ՝ տեսակոնֆերանսի ձեւաչափով:

Խորհրդի անդամները զրուցել են աշխարհում կորոնավիրուսով վարակվածների աճող դինամիկայի մասին, որն արդեն գերազանցել է 53 միլիոնը եւ հերթական ռեկորդային ցուցանիշ է գրանցել:

Նշվել է, որ, չնայած, կորոնավիրուսային վարակի դեպքերի աճին, երկիրը վարում է կետային եւ տեղային մոտեցումների օգտագործման ռազմավարություն, եւ չի նախատեսվում համակարգային սահմանափակումների կիրառում: Զրույցը վերաբերում էր կետային սահմանափակումների կատարման գործընթացին, որն ուժի մեջ է մտել նոյեմբերի 9-ից: Այս առումով, սահմանված կանոնակարգերի կատարման մոնիտորինգը ավելի է խստացվելու:

Խորհրդի անդամները քննարկել են հիվանդանոցների գերբեռնվածությունը կանխելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:

Առողջապահության նախարարը խորհրդի անդամներին տեղեկություն է փոխանցել բնակարանային բուժման, ինչպես նաեւ հոսպիտալներում եւ կովիդ-հյուրանոցներում տիրող իրավիճակի մասին, իսկ Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնի ղեկավարը խոսել է թեստավորման գործընթացի մասին:

Խորհուրդը մեկ անգամ եւս ընդգծել է պաշտպանիչ դիմակ կրելու եւ հեռավորություն պահելու նշանակությունը, որը կնպաստի վարակի տարածմանը: Այսօրվա տվյալներով, Վրաստանում հաստատված է նոր կորոնավիրուսի 73 154 դեպք: Ապաքինվել է 55 511 անձ, մահացել՝ 636-ը:

Կարանտինային տարածքում գտնվում է 2 447 անձ, կովիդ-հյուրանոցում՝ 3413, ստացիոնար հսկողության տակ՝ 4957 բուժառու:

Վարչապետի գլխավորությամբ գործող միջգերատեսչական համակարգող խորհրդի աշխատանքին ակտիվ մասնակցում են Վրաստանի խորհրդարանը՝ նախագահ Արչիլ Թալակվաձեի գլխավորությամբ եւ նախագահի վարչությունը:

ՎՐԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՐԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արժույթի միջազգային հիմնադրամը հրապարակել է ընդլայնված ֆինանսական մեխանիզմով աջակցվող 7-րդ տեսության հաշվետվությունը, որտեղ գնահատել է համավարակի պայմաններում Վրաստանի գործադիր իշխանության ձեռնարկած միջոցառումները: Միջազգային ֆինանսական այդ կազմակերպության գնահատմամբ՝ Վրաստանի իշխանությունների ժամանակին ձեռնարկած միջոցառումները նվազեցրել են համավարակի տնտեսական եւ սոցիալական բացասական ազդեցությունները:

Հիմնադրամի գնահատմամբ՝ Վրաստանի իշխանությունները անց են կացրել գիտակցված մակրոտնտեսական քաղաքականություն, եւ միջազգային ֆինանսական հաստատություններից ստացված զգալի աջակցությունը կառավարությանը հնարավորություն է տվել պահպանել հարկաբյուջետային հատվածի կայունությունը:

Հաշվետվության մեջ նշվում է, որ Վրաստանի տնտեսությունն աճել է մոտ 5,3 տոկոսով, ինչը, ամենայն հավանականությամբ, կլինի ամենաբարձր ցուցանիշը ոչ միայն մեր տարածաշրջանում, այլ ողջ Եվրոպայում: Աճին կնպաստի ենթակառուցվածքի վրա ծախսված գումարների ավելացումը եւ, ԱՄՀ-ի հիմնադրամի կանխատեսմամբ, տնտեսական աճը հաջորդ տարի կթարմացվի ու կհասնի 4,3 տոկոսի: Նախկին 5 տոկոս աճի կանխատեսման փոփոխության պատճառը, հիմնադրամի կողմից նշվում է տարածաշրջանային լարվածությունը եւ ողջ աշխարհում համավարակային իրավիճակը:

Անդրադառնալով բյուջետային քաղաքականությանը, հաշվետվության մեջ նշված է, որ բյուջեի հավասարակշռված կատարումը նպաստել է պետական ներդրումների եւ ԱԱՀ-ի վերադարձների արագացմանը: Արդյունքում, 2020 թվականի բյուջետային պակասուրդը կանխատեսվում է ՀՆԱ-ի 8.7 տոկոսի սահմաններում:

Հաշվետվության մեջ ընդգծվում է կառավարության կողմից նախատեսվող կառուցվածքային բարեփոխումների, ներառյալ՝ հարկային վարչարարության բարելավման եւ հարկաբյուջետային ռիսկերի մոնիտորինգի հետագա քայլերի կարեւորությունը. կառավարության կողմից աշխատատեղերը պահպանելու եւ բնակչության սոցիալական պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ իրականացված քայլերի անհրաժեշտությունը:

«Միջոցառումները, ինչպիսիք են աշխատավարձի սուբսիդավորումը, դրամական տրանսֆերները տնային տնտեսությունների համար, ներառյալ՝ ոչ ֆորմալ հատվածում աշխատողներին, սոցիալական ընդլայնված տրանսֆերները, բիզնեսի համար ժամանակավոր հարկային արտոնությունները, օգնել են պահպանել տնտեսական գործունեությունը»,- ասված է հաշվետվության մեջ:

էջը պատրաստեց
ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՐ 20,8 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ ԵՎ 200 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻՑ

Վրաստանի եւ վերակառուցման վարկային բանկի (KfW) միջեւ ստորագրվել են վարկային եւ դրամաշնորհային համաձայնագրեր՝ «Սոցիալական անվտանգությունը COVID 19-ի համավարակի համատեքստում»: Համաձայնագրերը ստորագրել են Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին եւ Հարավային Կովկասում վերակառուցման վարկային բանկի (KfW) տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Կլաուս Ֆայգելը:

Նախագծի շրջանակներում՝ վարկային համաձայնագրով հատկացված 15 միլիոն եվրոն տրամադրվում է COVID 19-ի համավարակից տուժած անձանց սոցիալական օգնության հատուցման ապահովման համար:

Դրամաշնորհային համաձայնագրով հատկացված գումարը՝ 5,8 մլն եվրոյի չափով, նպատակային սոցիալական աջակցության ծրագրի համաձայն, նախատեսված է ծայրահեղ աղքատությունից տուժած մարդկանց սոցիալական օգնության համար:

Այս համաձայնագրերը նաեւ այն ֆինանսական աջակցության մի մասն են, որը Վրաստանի կառավարությունը ստացել է գործընկեր միջազգային դոնոր կազմակերպություններից՝ COVID-19-ի համավարակի դեմ պայքարի եւ երկրի տնտեսության հետագա վերականգնման համար:

Իր հերթին, Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) հաստատել է 200 միլիոն ԱՄՆ դոլարի վարկ՝ Վրաստանի տնտեսությունը վերականգնելու համար համավարակից պատճառված վնասներից՝ լուծելու պետական ֆինանսական կառավարման խնդիրները եւ սոցիալական բարեկեցության մարտահրավերները:

Ֆինանսական կայունության եւ բարեկեցության աջակցության ծրագիրը ԱԶԲ-ի համապարփակ եւ ինտեգրված աջակցության փաթեթի մի մասն է՝ Վրաստանում համավարակի վնասը առողջությանը, սոցիալական պաշտպանությանը եւ տնտեսությանը մեղմելու համար:

Ծրագիրը կօգնի տարեց մարդկանց, որոնք հատկապես խոցելի են Covid-19-ի հետեւանքների նկատմամբ: Համավարակը նաեւ առաջ բերեց մեծ հարկաբյուջետային բացթողում, քանի որ կառավարության հակաճգնաժամային միջոցառումները մեծացնում էին պետական ծախսերը, իսկ հարկային եկամուտները նվազեցնում:

ԱԶԲ-ի ծրագրի նպատակն է ուժեղացնել կառավարության հարկաբյուջետային ռիսկերի կառավարումը եւ խորացնել պետական արժեթղթերի ներքին շուկաները՝ նվազեցնելու համար պետական արտարժույթի պարտքը: Դա կօգնի նվազեցնել վերաֆինանսավորման եւ արտարժույթի ռիսկերը, որոնք խոչընդոտ են համարվում մակրոտնտեսական կայունության համար: Մակրոտնտեսական կայունությունը տնտեսական վերականգնման նախապայմանն է:

ԿՈԲԱ ԳՎԵՆԵՏԱՁԵ. «ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՁԵՌՆԱՐԿԵԼ ԵՆՔ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ»

- Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի գնահատմամբ, բանկերի առողջացման եւ բանաձեւի շրջանակի ստեղծումը, որը հաստատվեց 2019 թվականի դեկտեմբերին, հզորացրեց Վրաստանի ֆինանսական կայունությունը,- այս մասին հայտարարեց Ազգային բանկի նախագահ Կոբա Գվենետաձեն:

Կոբա Գվենետաձեի խոսքով, համավարակի ընթացքում Վրաստանի Ազգային բանկն իրականացրեց կարեւոր միջոցառումներ:

- Կորոնավիրուսի համավարակի երկրի ֆինանսական սեկտորի վրա բացասական ազդեցության մեղմացման եւ երկրի էկոնոմիկայի խրախուսման նպատակով, Վրաստանի Ազգային բանկը կարեւոր միջոցառումներ անցկացրեց: Մասնավորապես, կրճատեց կապիտալի եւ իրացվելիք պահանջները, որպեսզի նպաստեր վարկերի վերակազմավորմանը, եւ թեթեւացներ ցածր գնաճի ճնշման պայմաններում դրամավարկային քաղաքականությունը,- ասաց Ազգային բանկի նախագահը:

ԼԱՐԻԻ ԱՐԺԵԶՐԿՄԱՆ ՏԵՄՊԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

Վերջին մի քանի ամիսների ընթացքում վավերացվում էր ազգային տարադրամի արագընթաց արժեզրկում, որը Ազգային բանկն ու երկրի գործադիր իշխանությունը պայմանավորում էին գլոբալ մասշտաբներ ընդունած կորոնավիրուսի համավարակի արդյունքում համաշխարհային տնտեսության անկմամբ: Բացի այդ, կոնկրետ Վրաստանի համար խիստ բացասական ազդեցություն գործեց բյուջեի համալրման այնպիսի աղբյուրի կաթվածահարումը, ինչպիսին զբոսաշրջությունն էր:

Նոյեմբերի 13-ի դրությամբ, պաշտոնական տվյալներով, ԱՄՆ մեկ դոլարի ազգային տարադրամով համարժեքը կազմեց 3, 2951, եվրոն՝ 3,8961 լարի:



ԼՈՒՐԵՐ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԵԽԵԹԻԻՑ

ԿԱՐՏՈՖԻԼԻ ՀԱՐՈՒՍՏ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է ԱՎԱՐՏԻՆ

Հավաքեցին հարուստ բերք, սակայն կանգնեցին նոր մարտահրավերի առջեւ: Եվ այդ մարտահրավերը գնողականության ցածր մակարդակն է ու նվազ գինը:

Ախալքալաքիի մունիցիպալիտետում կարտոֆիլի բերքահավաքն ավարտվեց, մարդիկ գոհ են բերքից, սակայն գոհ չեն գնից ու գնորդների բացակայությունից:

Տեղում մեկ կիլոգրամ կարտոֆիլը վաճառում են 50-65 թեթրիով: Այժմ, պահեստավորման համար, ընթանում է բերքի տեսակավորման գործընթացը: Նրանք, ովքեր կարող են դեռ չվաճառել, պահում են, որպեսզի հետո վաճառեն, եթե գինը բարձրանա: Այս տարի կարտոֆիլի բերքը, ըստ հողագործների, շատ լավն է, չնայած այն փաստին, որ կարկուտը խփել էր որոշ դաշտերի, սակայն գյուղացիներն այսօր մտահոգված են իրացման խնդրով, գնորդներ չկան, եւ գինը, ըստ նրանց, շատ ցածր է:

Նշենք, որ այս տարի կարտոֆիլի բերքատվությունը բավական բարձր էր: Ճիշտ է, վեգետացիոն ժամանակահատվածում տեղաց կարկուտ, սակայն Ախալքալաքիի երկրագործները կարողացան մեկ հեկտարի հաշվով ստանալ շուրջ 25 տոննա բերք:

ԱԽԱԼՑԻԽԵ-ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ Է ԱՌԱՋԱՑՐԵԼ

Վերանորոգման աշխատանքների պատճառով Ախալցիխե-Ախալքալաքի ճանապարհին երթեւեկությունը դժվարացել է: Ներկայումս ճանապարհի շուրջ 1 կմ (Կորխի կամրջից) արդեն ասֆալտապատվել է: Ընդհանուր առմամբ, կվերանորոգվի ճանապարհի շուրջ 7 կմ:

Այս պահին Ախալցիխե-Ախալքալաքի ճանապարհին, ասֆալտապատմանը զուգահեռ, իրականացվում են նաեւ խճապատման եւ հարթեցման աշխատանքներ: Վերանորոգման աշխատանքների պատճառով տրանսպորտի տեղաշարժը բարդացել է: Այնտեղ, որտեղ մեքենաներ են աշխատում, երթեւեկությունը միակողմանի է, ուստի հաճախ պետք է սպասել, որ հանդիպակաց մեքենաներն անցնեն, եւ հետո միայն շարունակեն իրենց ճանապարհը:

Նշենք, որ Ախալցիխե-Ախալքալաքի ճանապարհի վերականգնումը սկսվել է սեպտեմբերի երկրորդ կեսից եւ ընդհանուր կվերականգնվի «Կորխիս Ծղալի» կամրջից ճանապարհի շուրջ 7 կմ հատվածը:

Ախալցիխե-Ախալքալաքի մայրուղին, մասնավորապես, Ախալքալաքի տանող 62-69 կմ ճանապարհահատվածը վտանգավոր է դարձել վարորդների համար:

Հիշեցնենք, որ Վրաստանի Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության ավտոճանապարհների վարչությունը, ընթացիկ տարվա հուլիսին, Ախալցիխե-Ախալքալաքի ճանապարհի վերականգնման համար («Կորխիս Ծղալի» կամրջից մինչեւ Ախալքալաքի) մրցույթ էր հայտարարել՝ 6 638 460.00 լարիի չափով: Մրցույթը շահել էր «Ճանապարհաշինության վարչություն 1»-ը՝ 5 744 000.00 լարիի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՐՑԱԽՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԵՑ ՀՐԱԴԱԴԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

2. Աղդամի շրջանը եւ Ադրբեջանի Հանրապետության Ղազախի շրջանում հայկական կողմից պահվող տարածքները ադրբեջանական կողմին են վերադարձվում մինչեւ 2020 թվականի նոյեմբերի 20-ը:

3. Լեռնային Ղարաբաղի շփման գծի երկայնքով եւ Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայվում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմ՝ 1960-ական զինյալներ հրածգային զենքով, 90 զրահամեքենա, 380 միավոր ավտոմոբիլային եւ հատուկ տեխնիկա:

4. Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբը ծավալվում է հայկական զինված ուժերի դուրսբերմանը զուգահեռ: Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի գտնվելու ժամկետը 5 տարի է՝ հերթական 5 ամյա ժամանակահատվածով ավտոմատ երկարաձգմամբ, եթե կողմերից ոչ մեկը ժամկետի ավարտից վեց ամիս առաջ չհայտարարի այդ դրույթի կիրառումը դադարեցնելու մտադրության մասին:

5. Հակամարտության կողմերի կողմից պայմանավորվածությունների կատարման վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծվում է Հրադադարի վերահսկման խաղաղապահ կենտրոն:

6. Հայաստանի Հանրապետությունը մինչեւ 2020 թվականի նոյեմբերի 15-ը Ադրբեջանին Քելբաջարի շրջանն է վերադարձնում, իսկ մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 1-ը՝ Լաչինի շրջանը՝ պահպանելով Լաչինի միջանցքը (5 կմ լայնությամբ), որը կապահովի Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ եւ միեւնույն ժամանակ չի շոշափի Շուշին:

Կողմերի համաձայնությամբ՝ առաջիկա երեք տարում կորոշվի Լաչինի միջանցքով երթեւեկության նոր երթուղու կառուցման ծրագիրը, որը կապահովի Ստեփանակերտի եւ Հայաստանի միջեւ կապը՝ հետագայում այդ երթուղու պահպանման համար ռուսական խաղաղապահ զորակազմի վերատեղաբաշխմամբ:

Ադրբեջանի Հանրապետությունը երաշխավորում է Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների երթեւեկության անվտանգությունը երկու ուղղություններով:

7. Ներքին տեղահանված անձինք եւ փախստականները վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք եւ հարակից շրջաններ՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո:

8. Կատարվում է ռազմագերիների եւ այլ պահվող անձանց ու զոհվածների դիակների փոխանակում:

9. Տարածաշրջանում բացվում են բոլոր տնտեսական եւ տրանսպորտային կապերը: Հայաստանի Հանրապետությունն ապահովում է տրանսպորտային հաղորդակցությունը Ադրբեջանի Հանրապետության եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության արեւմտյան շրջանների միջեւ՝ երկու ուղղություններով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների ու բեռների անարգել երթեւեկություն կազմակերպելու նպատակով: Տրանսպորտային հաղորդակցության վերահսկողությունն իրականացնում են Ռուսաստանի ԱԴԾ Սահմանապահ ծառայության մարմինները:

Կողմերի համաձայնությամբ կապահովվի Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունը Ադրբեջանի արեւմտյան շրջանների հետ կապող նոր տրանսպորտային հաղորդակցությունների կառուցումը»:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԵՍ ԾՆԿԻ ԵՄ ԳԱԼԻՍ ՄԵՐ ԲՈԼՈՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԱՌՋԵՎ»

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է Լեռնային Ղարաբաղում պատերազմը դադարեցնելու հայտարարությանը, ինչպես նաեւ՝ այդ հայտարարության հրապարակումից հետո Երեւանում ստեղծված իրավիճակին:

Նրա խոսքով, որոշումը կայացվել է ռազմական իրավիճակի վերլուծության արդյունքում եւ այն մարդկանց գնահատականների եւ նրանց լսելու արդյունքում, ովքեր ամենաշատն են տիրապետում ռազմական իրավիճակին: «Մենք պետք է հասկանանք մի բան, որ մեր փառապանծ բանակն այսօր կռվել է ահաբեկիչների, ՆԱՏՕ-ի երկրորդ բանակի եւ ադրբեջանցիների դեմ: Եվ մեր բանակը 44 օր պատվով կռվում է՝ կրելով անթիվ զրկանքներ: Ես էլի եմ ասում՝ ծնկի եմ գալիս մեր բոլոր նահատակների, ծնկի եմ գալիս նրանց մայրերի, հայրերի, քույրերի, եղբայրների, կանաց, զավակների առաջ: Ես նաեւ նրանցից ներողություն եմ խնդրում, որ մենք չենք կարողացել իրենց գործը պատշաճ մակարդակով շարունակել: Բայց մենք այս որոշումը կայացրել ենք՝ հաշվի առնելով ռազմական իրադրությունը, ոչ միայն այսօրվա, այլ նաեւ հնարավոր շարունակության»,- մանրամասնեց Փաշինյանը:

Անդրադառնալով պատերազմի դադարեցման մասին հայտարարության հրապարակումից հետո Երեւանում ստեղծված իրավիճակին՝ Փաշինյանն ընդգծեց. «Մի ընդդիմադիր քաղաքական գործիչ կա, որը նաեւ իմ հրաժարականն է պահանջել, երեկ չէ առաջին օրը դիրքերը թողել է, փախել՝ գեներալի ուսադիրներով, այսօր եկել ասում է՝ «մենք մեր բանակի կողքը կանգնած ենք»:

- Բա ինչո՞ւ էր փախել: Ես համոզված եմ, որ այսօրվա կազմակերպիչների մեջ կան նաեւ այդպիսի մարդիկ: Գիտեմ, որ կան շատ մարդիկ, ում մտադրություններն ազնիվ եւ արդար են, գիտեմ, որ կան նաեւ մեր զոհված եղբայրների հարազատները...

Այսօր ինձ ասացին, որ այս դեբոշներ սարքողների մեջ կան օլիգարխների հանցավոր խմբեր: Դա այն մարդիկ են, ովքեր 20 տարի գողացել են զինվորից, բանակից, 20 տարի հարկ չեն վճարել, այսօր եկել ազգի ու դավաճանության մասին են խոսում: Այսօր գիտեք՝ ինչո՞ւ են այդպես ազատ մտնում այստեղ-այնտեղ ջարդուփշուր անում, որովհետեւ ինչքան ոստիկան կա, ինչքան ԱԱԾ կա, ինչքան ՊՊԾ կա, բոլորը դիրքերում են, իմ որդին էլ է դիրքերում, իմ կինն էլ է դիրքերում: Իմ կինը դիրքերում է, եւ ես հպարտ եմ դրա համար: Բայց ես հասկանում եմ, որ պետք է բովանդակային եւ մանրամասն բացատրություններ տամ: Այդ բացատրությունները ես այսօր էլ եմ պատրաստ տալ, բայց ինչո՞ւ չեմ տալիս: Ինֆորմացիոն դիսոնանսի հետ կապված խնդիր կա: Ռազմական եւ պատերազմական դրության պայմաններում ամեն ձեւակերպած նախադասությունն ազդեցություն է ունենում մարտական գործողությունների վրա: Այդ դիսոնանսի պատճառը նաեւ դա է, եւ մենք դա հասկանում ենք եւ հասկացել ենք, բայց դուք էլ պետք է հասկանաք, որովհետեւ ֆեյսբուքյան գրառումները, թե ամեն մարդ նախադասությունները ոնց է ձեւակերպում, շատ արագ հասնում է առաջին գիծ եւ շատ արագ թշնամուն է հասնում: Դա է պատճառը, որ ես այսօր չեմ կարող ասել այն ամենը, ինչ պիտի ասեմ, - ասաց Փաշինյանը:

Նա բոլոր քաղաքացիներին խնդրեց տուրք չտալ ջարդարարների խմբին, որովհետեւ արդեն իմացել է, թե այնտեղ ովքեր են, կան հայտնի կուսակցական շրջանակներ:

- Այդ կուսակցական շրջանակներից մարդ կա, որ հարուցված քրեական գործի շրջանակներում՝ պետությանը 80 միլիարդ դրամի պարտավորություն ունի, որը պետք է այս տարիներին վճարվեր բյուջե, առնվազն դրա 60 տոկոսը կամ կեսը, քանի որ մնացածը տույժ-տուգանքներ են, այդ գումարը պետք է դառնար զենք, տեխնիկա, գիտություն, ԱԹՍ եւ այսպես շարունակ: Այդ մարդիկ այսօր դեբոշ են անում իրենց թալանի իրավունքը վերգտնելու համար, - ասաց վարչապետը:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԱՐՎԱԾ Է

Արցախա-ադրբեջանական ռազմական դիմակայության դադարեցման մասին Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների հայտարարության տեքստի հրապարակումից հետո, Երեւանում ընդդիմադիր 17 կուսակցությունների կողմից հայտարարության չեղարկման պահանջով անցկացվեցին բողոքի ցույցեր: Կուսակցությունները հանրահավաք էին հրավիրել՝ նշելով, որ ներկայացնելու են պատերազմի հետեւանքով ստեղծված իրավիճակից ելքի իրենց տարբերակը:

Հրադադարի վերաբերյալ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունից հետո բազմաթիվ մարդիկ շարժվել են դեպի Հանրապետության հրապարակ, մի խումբը ներխուժել է կառավարության գլխավոր մասնաշենք ու վարչապետի աշխատասենյակ, մի մասն էլ շարժվել է դեպի Բաղրամյան պողոտա ու մտել Ազգային ժողովի շենք: Աժ նախագահ Արարատ Միրզոյանը ծեծի է ենթարկվել, նրան տեղափոխել են հիվանդանոց:

Հանրահավաքի ավարտից հետո ոստիկանությունը բերման է ենթարկել մի շարք մասնակիցների, որոնք հետո ազատ են արձակվել:

Նշենք, որ Երեւանում հայտարարության չեղարկման պահանջով ցույցերը շարունակվում են:

ԿԱՅԱՆՎԱՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Նոյեմբերի 12-ին կայացավ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը:

Հրադադարի ստորագրումից հետո երկրի ղեկավարների այդ հանդիպմանը քննարկվել է երկրում ստեղծված իրավիճակը:

ԱՆՑ ԵՆ ԿԱՅՎՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը քաղաքական խորհրդակցություններ է անցկացնում խորհրդարանական եւ արտախորհրդարանական ուժերի հետ:

Հանդիպումներում մտքեր են փոխանակվում երկրում ստեղծված ներկա իրավիճակի շուրջ, անդրադառնում ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ Հայաստանի վարչապետի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների ստորագրած փաստաթղթին: Կողմերը ներկայացնում են իրենց մոտեցումները վերոնշյալ հարցերի շուրջ, ընդգծվում է երկրի ներքաղաքական կայունության պահպանման, հասարակական համերաշխության եւ միասնականության կարեւորությունը:

ՌՈՒՍ ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐԻՆ ՄՈՒՏՔԸ ՂԱՐԱԲԱՂ

Նոյեմբերի 9-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը ստորագրեցին համատեղ հայտարարություն՝ Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունները դադարեցնելու հետ կապված:

Ըստ այդ փաստաթղթի՝ պատերազմը դադարեցվեց նոյեմբերի 10-ին՝ ժամը 01:00-ից, ռուս խաղաղապահները մուտք են գործում Լեռնային Ղարաբաղ, որոնք դիրքեր կզբաղեցնեն դիմակայող կողմերի միջեւ: Ընդհանուր առմամբ, նախատեսվում է ներգրավել 1960 ռուս զինծառայող, 90 զրահամեքենա, 380 միավոր ավտոմոբիլ եւ հատուկ տեխնիկա:

ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԹՈՒՐՔ ԽԱՂԱՂԱՐԱՐՆԵՐ ՉԵՆ ԼԻՆԻ

Որեւէ թուրք խաղաղապահ Ղարաբաղ չի ուղարկվելու: Այս մասին հայտնել է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը:

Նա հայտնեց, որ թուրք դիտորդների տեղաշարժի սահմանները կսահմանափակվեն Ադրբեջանում դիտորդական կենտրոնով: Լավրովի խոսքով, չկա նախանշան այն բանի, որ որեւէ մեկը փորձում է խափանել Ղարաբաղի շուրջ Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի միջեւ ձեռք բերված համաձայնությունը:

CyanMagentaYellowBlack

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ

15.11.2020 Բարեկենդան Հիսնակաց Պահոց

Հիսնակը հիսնօրյա Պահքի շրջան է, որը նախորդում է Աստվածահայտնության տոնին: Հիսնակաց Բարեկենդանը 7 օրերի շարժականությամբ նշվում է նոյեմբերի 15-ից մինչեւ 21-ը, այս տարի՝ նոյեմբերի 15-ին:

21.11.2020 Տոն Երեքամյա Սուրբ Աստվածածնի տաճարի ընծայման

Սուրբ Կույս Մարիամին նվիրված տոներից է Երեքամյա Սուրբ Աստվածածնի տաճարին ընծայման տոնը, որ բոլոր քրիստոնեական եկեղեցիները ոգեկոչում են նոյեմբերի 21-ին:

Աստվածածնի ընծայման տոնը Հայ եկեղեցի մուտք է գործել ԺԸ դարում: Երեքամյա Ս. Աստվածածնի՝ տաճարին ընծայման տոնը Հայ Առաքելական եկեղեցու անշարժ տոներից է:

ՄԵՏԵԽԻԻ ԿԱՄՐՋԻ ՎՐԱ ՆՇՎԵՑ 100 000 ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Նոյեմբերի 13-ին, Թբիլիսիում, Մետեխիի կամրջի վրա փոքր հոգեհանգստի արարողությամբ, Քուռ գետ վառված մոմերով ծաղկեպսակների իջեցմամբ նշվեց 1795 թվականի Ջալալ-էդ Դինի ժամանակ նահատակված 100 000 նահատակների հիշատակման օրը:

Սովորաբար այդ օրը ավանդաբար անցկացվում էր բազմամարդ երթ, որն ավարտվում էր Մետեխիի կամրջի վրա՝ հոգեհանգստով, տարբեր տոնական միջոցառումներով եւ ջրի վրա ծաղիկներ փռելով: Վրաստանի պատրիարքարանի որոշմամբ, համավարակի կտրուկ տարածման պատճառով, այս տարի հավատացյալների երթ չանցկացվեց:

ՄԱՀԱՑԵԼ Է ԱՐՄԵՆ ՋԻԳԱՐԽԱՆՅԱՆԸ



Նոյեմբերի 14-ին, 85 տարեկան հասակում, Հավերժի ճամփան բռնեց ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, բազմաթիվ կառավարական եւ միջազգային մրցանակների դափնեկիր ու շքանշանակիր Արմեն Ջիգարխանյանը:

Արմեն Ջիգարխանյանը սերում էր թիֆլիսահայ հնագույն սերնդից, որը հետագայում Հայաստան էր տեղափոխվել: Կինոյի աստղը առաջին քայլերը սկսել է «Հայֆիլմ» կինոընկերությունում՝ որպես օպերատորի օգնական: 1954 թվականին ավարտել է Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտը եւ ավելի քան տասը տարի աշխատել է Երեւանի Կ.Ս.Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում: 1967-ից բնակություն է հաստատել Մոսկվայում, հանդես գալով տեղի Լենկոմ, Մայակովսկու անվան ակադեմիական եւ այլ թատրոններում:

Արմեն Ջիգարխանյանը ամենաշատ նկարահանվող ռուսական դերասանն էր՝ գրանցվելով Գինեսի ռեկորդների գրքում (ավելի քան 250 դերակատարում կինո եւ հեռուստաֆիլմերում): Որպես պրոֆեսոր, Արմեն Ջիգարխանյանը դերասանական վարպետություն է դասավանդել ՎԳԻԿ-ում: 1996 թվականին իր կուրսի հիմքով ստեղծել եւ ղեկավարել է Մոսկվայի դրամատիկական թատրոնը:

«Վրաստան» թերթը իր վշտակցությունն է հայտնում խմբագրության ծրագրավորող Տիգրան Սիրադեղյանին, սիրելի հոր՝

Էդիկ Երվանդի ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ զորակցում հանգուցյալի ընտանիքին ու մերձավորներին:



Թբիլիսիի թիվ 104 հայկական հանրային դպրոցի մանկավարժները, աշակերտները, ծնողները խորապես ցավակցում են կրթօջախի փոխտնօրեն Ալմարի Սիրադեղյանին, ամուսնու՝

Էդիկ Երվանդի ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ վշտակցում հանգուցյալի ընտանիքին ու մերձավորներին:

ՖՈՒՏԲՈԼ

ՑԱՎԱԼԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻՆ ԶՐԿԵՑ ԵՎՐԱԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԳՐԻՑ

Նոյեմբերի 12-ին, Թբիլիսիի Բորիս Պայճաձեի անվան ազգային խաղադաշտում կայացավ Եվրո 2020 առաջնության թվով 36-րդ մասնակցի բացահայտման հանդիպումը Վրաստանի եւ Հյուսիսային Մակեդոնիայի հավաքականների միջեւ:

Նախընտրական, խմբային մրցաշարերը հաջողությամբ հաղթահարած Վրաստանի ազգային ընտրանին առաջին անգամ իրատեսական հնարավորություն ուներ, նորանկախ Վրաստանի պատմության մեջ մասնակցելու մայրցամաքի առաջնության եզրափակիչ փուլին, թեպետ դրամատիկ, անզիջում պայքարում անցած մրցամարտում վրաց ֆուտբոլիստները նվազագույն՝ 0:1 հաշվով պարտություն կրեցին եւ զրկվեցին առաջնության ուղեգրից:

Նշենք, որ նոյեմբերի 12-ին հայտնի դարձան համավարակի պատճառով այս տարի հետաձգված եւ 2021 թվականի հունիսի 11-ից մինչեւ հուլիսի 11-ը անցկացվելիք առաջնության բոլոր մասնակիցները: Մրցաշարի վերջին չորս ուղեգրերը Հյուսիսային Մակեդոնիայից բացի նվաճեցին նաեւ Շոտլանդիան, Սլովակիան եւ Հունգարիայի հավաքականները:

Հիշեցնենք, որ եվրոպայի առաջնության 60-ամյակի կապակցությամբ մրցաշարը կանցկացվի 12 քաղաքներում՝ Լոնդոնում, Մյունխենում, Սանկտ Պետերբուրգում, Բաքվում, Հռոմում, Բուխարեստում, Դուբլինում, Կոպենհագենում, Բիլբաոյում, Գլազգոյում, Բուդապեշտում եւ Ամստերդամում:

Խ Ա Չ Բ Ա Ռ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Դատ ու ...: 5.Խաղատուն: 8.Զինվորականների խումբ: 9.Գանձայում ծնված բանաստեղծ Տերյանի անունը: 11.Անֆիլտր ծխախոտ: 12.Զաքարեի եղբայրը: 13.... ու վրա անել, քանդելթափել: 14.Եկեղեցու մաս: 15.Անձնական դերանուն: 17.Երգիչ Վլադիմիր Խալոյանի կեղծանունը: 19.Օժանդակ բայ: 21.Խոնավ,չչորացած: 24.Էքստրասենս ... Ջունակ: 26.Եմենի մայրաքաղաքը: 28.Ռուս կոմպոզիտոր Սերգեյ Ռախմանինովի օպերաներից: 30.... Շահեն, Հավասի, Աշոտ: 31.Կիլոմետրը կրճատ: 32.Քաղաք ԱՄՆ-ում ... Վեգաս: 33.Առանց երդիկի: 34.Եղեսիայի թագավոր: 35.Եգիպտոսի փարավոն: 37....տիոն, ...տիկա: 39.«... նորից վառիր» (Դրոյին նվիրված երգ): 41.Արական հին անուն: 43.Հայ բանաստեղծ Ղեւոնդ ...: 45.Հոր կամ մոր մայրը: 46.Բուժիչ բույս ... լեզու: 47.Առարկա: 49.Վրացու ազգանուն: 50.Փչովի նվագարան: 52.Մաշտոցյան այբուբենի գինվոր: 54.Առակ բառը սեռական հոլովում: 56.Զամբիայի քաղաքամայրը: 57.Ողնաշարի ոսկոր: 58.Մորաքույրը բարբառային: 59.Ծառի տեսակ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Գովասանք, ներբող: 2.Ղազախստանի մայրաքաղաքներից: 3.Ոչ թե դույլով, այլ ...: 4.Նավի մաս: 5.... Եգիպտոսի մայրախաղաքն է: 6.Իգական անուն: 7.Թող ինձ ...: 10.Բնակության վայր: 16.Բանկում դրված գումար: 18.Պետություն Ասիայում: 20.Կասեմ, ..., կասի: 22.Հայ գրող, թարգմանիչ ... Վերծանող (5-րդ դար): 23.Իսպանական ֆուտբոլային ակումբ: 25.Բանաստեղծ, թարգմանիչ ... Ոսկանյան: 26.Վրացական համեմունք: 27.Թբիլիսիում ծնված օպերային երգիչ ... Հովհաննիսյան: 29.Երկրում հաստատված կարգ հիվանդությունների ժամանակ: 30.Բանաստեղծության տեսակ: 31.Գոյություն ունի, ներկա է: 35.Հանդիպել, ... գալ (ժող.): 36.Վրաց մեծ գրող, հասարակական գործիչ: 38.Իգական անուն: 40.Հովհ.Թումանյանի հեքիաթ «... Հուռին»: 42.Գարնան ծաղիկ: 43.Թանկագին քար: 44.Եկեղեցում երգվող բանաստեղծություն: 47....նիվ, ...գային: 51.Չարորակ ուռուցք (ժող.): 53.Գետ Ուկրաինայում: 55.Քարտի տեսակ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Վարազդատ: 5.Փոստալ: 8.Րոպե: 9.Տարտու: 11.Գրիշա: 12.Վանգա: 13.Եղիա: 14.Նրանք: 15.Ռա: 17.Ենի: 19.Նու: 21.Իսկ: 24.Ակբա: 26.Սանա: 28.Արման: 30.Քաղաք: 31.Ում: 32.Ապա: 33.Աղերս: 34.Սուփրա: 35.Կերթաս: 37.Ավարտ: 39.Ար: 41.Ջեսիկա: 43.Անթերի: 45.Նախ: 46.Ելակ: 48.Եկ: 49.Արիանա: 50.Ջրալի: 52.Որ: 54.Արթիկ: 56.Լսարան: 57.Թան: 58.Շուն: 59.Դուստր:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Վարդենիս: 2.Արեգակ: 3.Դոլիձե: 4.Տիտանիկ: 5.Փարվանա: 6.Սրունք: 7.Աստառ: 10.Տանու: 16.Արաքս: 18.Նանա: 20.Վաղես: 22.Կամուրջ: 23.Ամարաս: 25.Բալետ: 26.Սաղարթ: 27.Նար: 29.Ապավինել: 30.Քաթան: 31.Ուս: 35.Կրախ: 36.Ծերեթելի: 38.Ակակի: 40.Շիրազ: 42.Երկրորդ: 43.Ադաման: 44.Երաժիշտ: 47.Աջ: 51.Արա: 52.Որդ: 53.Եթե: 55.Կուր:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445